Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերության ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ընկերությունն անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված: Չվաստակամ ապահովագրավճարները և չվաստակամ ապահովագրավճարներում վերաապահովագրողների մասը բացառվել է վերլուծությունից, քանի որ վերջիններս չեն համարվում պայմանագրային պարտավորություններ:

Հազար ՀՀ դրամ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	1,399,250	-	1,399,250	1,399,250
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	-	22,101	-	22,101	22,101
Վերապահովագրական ակտիվներ	-	307,298	-	307,298	307,298
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	1,764,931	-	1,764,931	1,764,931
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	103,250	-	103,250	103,250
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Ապահովագրական պարտավորություններ	-	835,838	-	835,838	835,838
Վարկեր ռեպո հանաձայնագրերով	-	1,432,615	-	1,432,615	1,432,615
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	-	763,326	-	763,326	763,326
Այլ պարտավորություններ	-	188,230	-	188,230	188,230

Հազար ՀՀ դրամ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	1,046,432	-	1,046,432	1,046,432
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	-	110,309	-	110,309	110,309
Վերապահովագրական ակտիվներ	-	252,834	-	252,834	252,834
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	466,278	-	466,278	466,278
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	75,776	-	75,776	75,776
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Ապահովագրական պարտավորություններ	-	750,956	-	750,956	750,956
Վարկեր ռեպո հանաձայնագրերով	-	1,071,891	-	1,071,891	1,071,891
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	-	542,620	-	542,620	542,620
Այլ պարտավորություններ	-	192,582	-	192,582	192,582

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտավորապես հավասար է հաշվեկշռային արժեքին

Կարճաժամկետ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար (մինչև երեք ամիս) ենթադրվում է, որ, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական

արժեքը: Այս ենթադրությունը կիրառելի է նաև որոշակի մարման ժամկետ չունեցող ցպահանջ ավանդների, բանկային հաշիվների համար:

Ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքներ

Ֆիքսված տոկոսադրույքներով և ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքը որոշվում է նրանց ճանաչման պահին գործող շուկայական տոկոսադրույքները համեմատելով նմանատիպ ֆինանսական գործիքների ընթացիկ շուկայական տոկոսադրույքների հետ: Ֆիքսված տոկոսադրույքներով ավանդների գնահատված իրական արժեքը հիմնված է դրամական հոսքերի վրա՝ զեղչված համանման պարտքային ռիսկ և ժամկետ ունեցող գործիքների տոկոսադրույքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ այդ գործիքների իրական արժեքը չէր տարբերվում հաշվեկշռային արժեքից:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ				2016
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Զցուցակված պարտատոմսեր (Ծանոթ. 13, 18)	-	4,658,362	-	4,658,362
ԸՆԴԱՄԵՆՆՆԸ	-	4,658,362	-	4,658,362

Հազար ՀՀ դրամ				2015
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Զցուցակված պարտատոմսեր (Ծանոթ. 13, 18)	-	4,464,018	-	4,464,018
ԸՆԴԱՄԵՆՆԸ	-	4,464,018	-	4,464,018

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ				2016
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Հիմնական միջոցներ				
Հող	-	-	7,000	7,000
Շենքեր	-	-	1,076,700	1,076,700
ԸՆԴԱՄԵՆՆԸ	-	-	1,083,700	1,083,700
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆՆԸ	-	-	-	-
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	-	-	1,083,700	1,083,700

Հազար ՀՀ դրամ				2015
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Հիմնական միջոցներ				
Հող	-	-	9,200	9,200
Շենքեր	-	-	1,078,700	1,087,900
Ընդամենը	-	-	1,087,900	1,087,900
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
	-	-	-	-
Ընդամենը	-	-	-	-
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	-	-	1,087,900	1,087,900

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների տարեկան շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2016	
	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	1,087,900	1,087,900
Ֆինանսական արդյունքում ճանաչված վնաս	(2,200)	(2,200)
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(21,574)	(21,574)
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	19,574	19,574
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,083,700	1,083,700

Հազար ՀՀ դրամ	2015	
	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	1,115,683	1,115,683
Ֆինանսական արդյունքում ճանաչված վնաս	(532)	(532)
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(44,189)	(44,189)
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	16,938	16,938
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,087,900	1,087,900

Ընկերության հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են խորհրդի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Ընկերության գլխամասային գրասենյակի շենքերի և հողի վերջին վերագնահատումը կատարվել է 30.12.2016թ. լիցենզավորված անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով

համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները: Իրական արժեքով շենքերի և հողի գնահատման համար Դեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ թե ոչ:

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամսախառն գումար	ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամսախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Վապակցված գումարներ, որոնք չեն հաշվանցվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Վարկեր ռեպո համաձայնագրերով (ծանոթ. 18)	1,432,615	-	1,432,615	(1,545,353)	-	(112,738)
	<u>1,432,615</u>	<u>-</u>	<u>1,432,615</u>	<u>(1,545,353)</u>	<u>-</u>	<u>(112,738)</u>
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Վարկեր ռեպո համաձայնագրերով (ծանոթ. 18)	1,071,891	-	1,071,891	(1,133,690)	-	(61,799)
	<u>1,071,891</u>	<u>-</u>	<u>1,071,891</u>	<u>(1,133,690)</u>	<u>-</u>	<u>(61,799)</u>

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հիմնական ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.4-ում: Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունների և վերաապահովագրական ակտիվների համար, ժամկետայնությունը որոշվում է՝ ելնելով ճանաչված ապահովագրության գծով պարտավորություններից գնահատված դրամական արտահոսքի ժամկետներից: Չվաստակաժ ապահովագրավճարները և չվաստակաժ ապահովագրավճարներում վերաապահովագրողների մասը բացառվել է վերլուծությունից, քանի որ վերջիններս չեն համարվում պայմանագրային պարտավորություններ:

Հազար ՀՀ դրամ

2016

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	2,365	3,788	1,092,741	1,098,894	300,123	233	300,356	1,399,250
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	-	9,460	11,291	20,751	1,350	-	1,350	22,101
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	313,892	1,451,039	1,764,931	-	-	-	1,764,931
Վերաապահովագրության գծով ակտիվներ	-	-	307,298	307,298	-	-	-	307,298
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	16,601	18,273	34,874	1,243,811	266,668	1,510,479	1,545,353
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	32,865	36,884	69,749	2,373,320	669,940	3,043,260	3,113,009
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	103,250	-	-	103,250	-	-	-	103,250
	105,615	376,606	2,917,526	3,399,747	3,918,604	936,841	4,855,445	8,255,192
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ապահովագրական պարտավորություններ	-	-	835,838	835,838	-	-	-	835,838
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	262,860	56,551	441,258	760,669	591	2,066	2,657	763,326
Վարկեր ռեպո համաձայնագրերով	1,432,615	-	-	1,432,615	-	-	-	1,432,615
Այլ պարտավորություններ	15,765	42,331	130,134	188,230	-	-	-	188,230
	1,711,240	98,882	1,407,230	3,217,352	591	2,066	2,657	3,220,009
Զուտ Դիրք	(1,605,625)	277,724	1,510,296	182,395	3,918,013	934,775	4,852,788	5,035,183
Կուտակված ճեղքվածք	(1,605,625)	(1,327,901)	182,395		4,100,408	5,035,183		

Հազար ՀՀ դրամ

2015

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	372,687	233,290	357,425	963,402	83,030	-	83,030	1,046,432
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	10,258	52,449	47,602	110,309	-	-	-	110,309
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	45,981	420,297	466,278	-	-	-	466,278
Վերապահովագրության գծով ակտիվներ	-	195,232	57,602	252,834	-	-	-	252,834
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	15,086	13,586	28,672	841,179	263,839	1,105,018	1,133,690
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	282,963	206,625	489,588	2,200,063	640,677	2,840,740	3,330,328
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	75,776	-	-	75,776	-	-	-	75,776
	458,721	825,001	1,103,137	2,386,859	3,124,272	904,516	4,028,788	6,415,647
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ապահովագրական պարտավորություններ	-	488,954	262,002	750,956	-	-	-	750,956
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	192,277	346,094	898	539,269	3,351	-	3,351	542,620
Վարկեր ռեպո համաձայնագրերով	1,071,891	-	-	1,071,891	-	-	-	1,071,891
Այլ պարտավորություններ	192,582	-	-	192,582	-	-	-	192,582
	1,456,750	835,048	262,900	2,554,698	3,351	-	3,351	2,558,049
	<u>(998,029)</u>	<u>(10,047)</u>	<u>840,237</u>	<u>(167,839)</u>	<u>3,120,921</u>	<u>904,516</u>	<u>4,025,437</u>	<u>3,857,598</u>
Զուտ Դիրք								
Կուտակված ճեղքվածք	<u>(998,029)</u>	<u>(1,008,076)</u>	<u>(167,839)</u>		<u>2,953,082</u>	<u>3,857,598</u>		

36 Ապահովագրական և ֆինանսական ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ռիսկերի բազմազանությունը և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները: Կարևորագույն ռիսկերն են ապահովագրական և ֆինանսական ռիսկերը: Վերջինս ներառում է պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը:

36.1 Ապահովագրական ռիսկ

Ապահովագրության պայմանագրերի գծով Ընկերության հիմնական ռիսկն այն է, որ փաստացի պահանջները և հատուցումները կամ դրանց հետ կապված ժամկետները տարբերվեն սպասված արդյունքներից: Վերոհիշյալը կապված է պահանջների հաճախականության, դրանց խստության մակարդակի, փաստացի վճարված հատուցումների և երկարաժամկետ պահանջների հետագա զարգացման հետ: Այդ պատճառով, Ընկերության նպատակն է ապահովել բավարար պահուստներ այդ պարտավորությունները ծածկելու համար: Վերը նշված ռիսկի մակարդակը զսպվում է՝ բազմազանեցնելով ապահովագրության պայմանագրերի լայն պորտֆելը: Ռիսկերի փոփոխականությունը նվազեցվում է նաև անդերռայթինգի քաղաքականության պատշաճ

ընտրության և իրականացման միջոցով, ինչպես նաև վերաապահովագրության պայմանագրերի կիրառմամբ:

Ռիսկերի զսպման քաղաքականության շրջանակներում Ընկերությունը իրականացնում է ինչպես ֆակուլտատիվ, այնպես էլ օբլիգատոր վերաապահովագրություն:

Վերաապահովագրությունը իրականացվում է համամասնական սկզբունքով:

Համամասնական վերաապահովագրության հիմնական մասը կազմում է քվոտային վերաապահովագրությունը, որն իրականացվում է Ընկերության գործունեության որոշ դասերի գծով ռիսկի ընդհանուր ենթարկվածությունը նվազեցնելու նպատակով:

Վերաապահովագրողներից վերականգնվող գումարները գնահատվում են ըստ չկարգավորված պահանջների պահուստի և համապատասխանում են վերաապահովագրության պայմանագրերին: Չնայած նրան, որ Ընկերությունն ունի վերաապահովագրության պայմանագրեր, այն չի ազատվում ապահովադիրների նկատմամբ ուղղակի պարտավորություններից և հետևաբար փոխանցված ապահովագրության հետ կապված գոյություն ունի նաև պարտքային ռիսկ, կապված վերաապահովագրողի կողմից վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտականությունների չկատարման հետ: Ընկերության կողմից վերաապահովագրության ձեռքբերումը այնպես է բազմազանեցված, որպեսզի Ընկերությունը կախված չլինի մեկ վերաապահովագրողից, իսկ Ընկերության գործառնությունները կախված չլինին վերաապահովագրության մեկ պայմանագրից:

36.1.1 Ապահովագրության պայմանագրեր

Ընկերությունը հիմնականում կնքում է հետևյալ դասերի ընդհանուր ապահովագրության պայմանագրեր՝ ավտոտրանսպորտային միջոցների (ներառյալ ուղևորներին պատճառված վնասների և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության), առողջության, գույքի, ընդհանուր պատասխանատվության, բեռների, դժբախտ պատահարների ապահովագրության, ինչպես նաև ԱՊՊԱ: Ընդհանուր ապահովագրության պայմանագրերը հիմնականում ընդգրկում են 12 ամսյա ժամկետ:

Բացի արդեն նշված ռիսկերի զսպման վերոնշյալ քաղաքականությունից, ռիսկին ենթարկվածությունը նվազեցնելու համար Ընկերությունը կիրառում է նաև պահանջների մանրամասն ուսումնասիրման քաղաքականություն, գնահատելու համար բոլոր նոր և գործող պահանջները, պարբերաբար դիտարկում է պահանջների կարգավորման ընթացակարգերը և հաճախ ուսումնասիրություններ է իրականացնում բացահայտելու համար հնարավոր կեղծ հայտերը: Բացի այդ, Ընկերությունը կիրառում է պահանջների ակտիվ կառավարման և արագ կարգավորման քաղաքականություն, նվազեցնելու համար ապագա անկանխատեսելի զարգացումների հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության վրա: Գ-նաճի ռիսկը զսպվում է ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները գնահատելիս գնաճը հաշվի առնելով:

Անդերռայթինգի և վերաապահովագրության ռազմավարությունների օգտագործման նպատակն է նվազեցնել Ընկերության ենթարկվածությունը ռիսկից՝ հիմնվելով Ընկերության ղեկավարության կողմից որոշված ռիսկի ընդունելի չափերի վրա: Մրա հիմնական նպատակն է հանդիսանում մեկ դեպքի ազդեցությունը սահմանափակել բաժնետիրական կապիտալի 10%-ի չափով՝ հաշվի առնելով վերաապահովագրությունը: Խորհուրդը կարող է ավելացնել կամ նվազեցնել ընդունելի սահմանաչափերը՝ կախված շուկայական պայմաններից և այլ գործոններից:

Ստորև ներկայացված է ապահովագրական պարտավորությունների կենտրոնացվածությունը՝ ըստ ապահովագրության դասերի.

Հազար ՀՀ դրամ	2016			2015		
	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	113,620	(62,788)	50,832	73,432	(3,091)	70,341
Առողջության ապահովագրություն	748,290	(90,950)	657,340	635,807	-	635,807
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	258,220	(47,811)	210,409	326,192	(59,680)	266,512
Օդանավերի ապահովագրություն	53,028	(39,652)	13,376	18,618	(8,536)	10,082
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	7,790	(5,066)	2,724	8,785	(4,690)	4,095
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	1,284,770	(1,132,322)	152,448	1,075,121	(896,834)	178,287
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	13,004	(2,997)	10,007	15,194	(3,243)	11,951
Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	51,009	(43,525)	7,484	6,862	(2,897)	3,965
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	159,754	(136,879)	22,875	168,890	(118,404)	50,486
Ֆինանսական վնասների ապահովագրություն	288,783	(289,222)	(439)	180,570	(183,165)	(2,595)
Աջակցության ապահովագրություն	87,035	(34,000)	53,035	96,938	(37,954)	58,984
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,772,667	-	1,772,667	1,582,039	-	1,582,039
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,837,970	(1,885,212)	2,952,758	4,188,448	(1,318,494)	2,869,954

Ընկերությունը սահմանում է առավելագույն սահմանաչափեր, որոնք նա պատրաստ է ընդունել ապահովագրության պայմանագրերից բխող ռիսկի կենտրոնացումների գծով: Բացի այդ, Ընկերությունը հետևում է այդ սահմանաչափերին ռիսկերի գնահատման և ընդունման (անդերռայթինգ) ժամանակ:

Առավելագույն կորուստը, վերապահովագրությունից հետո, որ Ընկերությունն ընդունում է յուրաքանչյուր պայմանագրի գծով, ընդհանուր կապիտալի 10%-ն է կազմում, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերի:

Հիմնական ենթադրություններ

Ընկերության պարտավորությունների գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունը այն է, թե արդյո՞ք Ընկերության ապագա պահանջների զարգացումը մնան կլիմի անցյալ պահանջների զարգացումների փորձին: Դրանք ներառում են ենթադրություններ, կապված պահանջների գծով միջին ծախսի, պահանջների կարգավորման ծախսերի, սպասվող վնասաբերության ցուցանիշների և յուրաքանչյուր տարում դժբախտ պատահարների գծով պահանջների քանակի հետ: Օգտագործվում են լրացուցիչ որակական դատողություններ՝ գնահատելու համար, թե որ տեղեկանքները կիրառելի չեն ապագայի համար, օրինակ՝ հատուկ նշանակություն ունեցող շուկայական պայմաններում, ինչպես օրինակ՝ հանրության վերաբերմունքի փոփոխությունը պահանջների ներկայացման հանդեպ, տնտեսական իրավիճակի

փոփոխությունը, ինչպես նաև ներքին գործոններ, ինչպիսիք են պորտֆելի կառուցվածքը, պոլիսների պայմանները, պահանջների կարգավորման ընթացակարգերը:

Հետագա դատողությունները օգտագործվում են որոշելու համար, թե որքանով կարող են արտաքին գործոնները, ինչպիսիք են դատական վճիռները, օրենսդրական դաշտը, ազդել գնահատումների վրա:

Ենթադրությունների վստահելիության վրա ազդող այլ կարևոր հանգամանքները ներառում են տոկոսադրույքները, վճարման ժամկետների երկարաձգումները և փոփոխությունները արտարժույթի փոխարժեքներում:

Այնուամենայնիվ, կապված ՀՀ-ում համեմատաբար նոր ապահովագրական շուկայի հետ, դժվար է կանխատեսել որևէ պահանջի հավանական արդյունքը և ներկայացված պահանջների վերջնական արժեքը: Վնասի վերջնական արժեքի վրա ազդող գործոններից շատերի ազդեցությունը դժվար է որոշել: Այդ պատճառով, Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է վիճակագրական տվյալները, շուկայական փոփոխությունները և այլ գործոններ, պահուստների ավելի զգուշավոր գնահատման համար:

Զգայունության վերլուծություն

Ապահովագրական պահանջների պահուստները զգայուն են վերոնշյալ հիմնական ենթադրությունների նկատմամբ: Որոշ ենթադրությունների համար հնարավոր չի եղել որոշել քանակական զգայունությունը, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները կամ գնահատման գործընթացում անորոշությունները: Ստորև ներկայացված վերլուծությունը իրականացված է հիմնական ենթադրություններում հնարավոր փոփոխությունների համար, այլ ենթադրությունները անփոփոխ լինելու պայմաններում, և ցույց է տալիս ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա: Ենթադրությունների փոխկապակցվածությունը զգալի ազդեցություն ունի պահանջների գծով պարտավորությունների վերջնական արժեքը որոշելու վրա, բայց ենթադրությունների փոփոխությունների ազդեցությունը ցույց տալու համար, ենթադրությունները փոփոխվում են անհատական հիմքով: Պետք է նշել, որ այս ենթադրությունների փոփոխությունները գծային չեն:

Հազար ՀՀ դրամ

2016

	Փոփոխություն ենթադրություններում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	
		Համախառն վերաապահովագրությունից	Զուտ վերաապահովագրությունից
Պահանջի միջին արժեք	+10	(340,990)	(321,776)
	-10	340,990	321,776
Սպասվող վնասաբերության ցուցանիշ	+10	(349,478)	(324,818)
	-10	349,478	324,818

Հազար ՀՀ դրամ	2015		
	Փոփոխություն ենթադրություններ ուն, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը Համախառն վերաապահովագրու- թյունից	Չուտ վերաապահովագրու- թյունից
Պահանջի միջին արժեք	+10	(358,058)	(340,221)
	-10	358,058	340,221
Սպասվող վնասաբերության ցուցանիշ	+10	(362,337)	(335,341)
	-10	362,337	335,341

Պահանջների զարգացման աղյուսակ

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս գնահատված կուտակային պահանջները, ներառյալ ներկայացված պահանջները և տեղի ունեցած, բայց չներկայացված պահանջները դեպքի յուրաքանչյուր հաջորդ տարվա համար, հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես նաև կուտակային վճարումները: Համախառն ապահովագրական պարտավորությունները 2016թ. համար զարգացել են հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2012	2013	2014	2015	2016	Ընդամենը
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական						
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	3,633,261	3,800,883	3,613,282	3,579,913	3,430,313	18,057,652
Մեկ տարի անց	3,870,080	3,684,982	3,505,611	3,491,539		14,552,212
Երկու տարի անց	3,887,415	3,690,036	3,509,025			11,086,476
Երեք տարի անց	3,893,376	3,686,628				7,580,004
Չորս տարի անց	3,892,836					3,892,836
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական	3,892,836	3,686,628	3,509,025	3,491,539	3,430,313	18,010,341
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ						
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	(3,216,890)	(3,149,624)	(2,953,271)	(2,919,756)	(2,767,597)	(15,007,138)
Մեկ տարի անց	(3,844,383)	(3,656,358)	(3,437,344)	(3,362,036)		(14,300,121)
Երկու տարի անց	(3,868,052)	(3,680,554)	(3,478,183)			(11,026,789)
Երեք տարի անց	(3,880,451)	(3,684,778)				(7,565,229)
Չորս տարի անց	(3,881,909)					(3,881,909)
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ	(3,881,909)	(3,684,778)	(3,478,183)	(3,362,036)	(2,767,597)	(17,174,503)
Ընդամենը համախառն ապահովագրական պարտավորություններ ըստ հաշվեկշռի	10,927	1,850	30,842	129,503	662,716	835,838

Չուտ ապահովագրական պարտավորությունները 2016թ. համար հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2012	2013	2014	2015	2016	Ընդամենը
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական						
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	3,509,751	3,664,909	3,270,827	3,243,156	3,118,520	16,807,163
Մեկ տարի անց	3,746,816	3,601,447	3,229,134	3,217,410		13,794,807
Երկու տարի անց	3,760,285	3,607,327	3,235,113			10,602,725
Երեք տարի անց	3,766,247	3,603,920				7,370,167
Չորս տարի անց	3,765,706					3,765,706
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական	3,765,706	3,603,920	3,235,113	3,217,410	3,118,520	16,940,669
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ						
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	(3,130,965)	(3,085,970)	(2,760,945)	(2,781,237)	(2,620,409)	(14,379,526)
Մեկ տարի անց	(3,724,912)	(3,580,202)	(3,211,714)	(3,201,741)		(13,718,569)
Երկու տարի անց	(3,744,672)	(3,597,846)	(3,229,379)			(10,571,897)
Երեք տարի անց	(3,757,071)	(3,602,070)				(7,359,141)
Չորս տարի անց	(3,758,530)					(3,758,530)
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ	(3,758,530)	(3,602,070)	(3,229,379)	(3,201,741)	(2,620,409)	(16,412,129)
Ընդամենը զուտ ապահովագրական պարտավորություններ ըստ հաշվեկշռի	7,176	1,850	5,734	15,669	498,111	528,540

36.2 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի: Հիմնական ոլորտները, որտեղ Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, հետևյալն են՝

- Պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվներ,
- Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ,
- Ապահովագրության գծով պարտավորություններում վերաապահովագրողի մաս,
- Վերաապահովագրողների նկատմամբ պահանջներ արդեն վճարված պահանջների գծով,
- Ապահովադիրների նկատմամբ պահանջներ,
- Ապահովագրության միջնորդների նկատմամբ պահանջներ:

Պարտքային ռիսկի հետագա բացահայտումներում չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի բաժինը ընդգրկված չէ վերաապահովագրական ակտիվների կազմում, քանի որ այն ֆինանսական ակտիվ չէ:

36.2.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցներ:

36.2.2 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Վարկանիշներ

Ստորև ներկայացված աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն Ընկերության պարտքային ռիսկի չափի վերաբերյալ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ դասակարգելով ակտիվները համաձայն գործընկեր կողմի վարկանիշների՝ ըստ միջազգային վարկանշային գործակալությունների:

Հազար ՀՀ դրամ	A+	AA	AA-	BB+	BBB+	A1	BBB-	A-	A	Զվարկանշ- ված	Ընդամենը
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	-	16,089	-	-	-	-	12,726	-	1,370,435	1,399,250
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	-	-	-	-	-	-	-	-	-	22,101	22,101
Վերաապահովագրական ակտիվներ	123,430	8,368	12,997	185	-	-	-	10,686	123,415	28,217	307,298
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	-	-	-	-	-	-	-	1,764,931	1,764,931
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	-	1,545,353	1,545,353
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	-	-	-	-	-	-	-	3,113,009	3,113,009
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	-	-	-	-	-	103,250	103,250
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	123,430	8,368	29,086	185	-	-	-	23,412	123,415	7,947,296	8,255,192
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	119,430	23,783	30,208	-	-	-	-	32,162	23,859	6,186,205	6,415,647

36.2.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունն ունի պարտքային ռիսկի քաղաքականություն, որը գնահատում և սահմանում է, թե որն է համարվում Ընկերության համար պարտքային ռիսկ: Քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայվում է ռիսկային միջավայրի փոփոխությունների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Վերաապահովագրությունն օգտագործվում է ապահովագրության ռիսկը կառավարելու նպատակով: Այնուամենայնիվ, սա չի ազատում Ընկերությանը իր հիմնական ապահովագրային պարտավորությունից: Եթե վերաապահովագրողը որևէ պատճառով չի կատարում պահանջի վճարում, ապա Ընկերությունը պարտավորվում է վճարել ապահովադիրին: Վերաապահովագրությունը կատարվում է այն գործընկեր կողմերի հետ, որոնք ունեն դրական վարկային գնահատական, իսկ ռիսկի սահմանաչափից հնարավոր է խուսափել, հետևելով գործընկեր կողմերի սահմանափակումներին վերաբերող քաղաքականության ուղեցույցին, որը սահմանվում է ամեն տարի Խորհրդի կողմից և ենթակա է կանոնավոր վերանայման: Վերաապահովագրողների վարկունակությունը հաշվի է առնվում տարեկան կտրվածքով վերանայելով ֆինանսական կայունությունը՝ պայմանագիրը վերջնական տեսքի բերելուց առաջ:

36.2.4 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, գործընկեր կողմերի հետ դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Ժամկետանց, բայց չարժեզրկված ակտիվներ

Ժամկետանց են համարվում այն ֆինանսական ակտիվները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ:

31.12.16թ. դրությամբ Ընկերությունը չունի ժամկետանց, բայց չարժեզրկված ֆինանսական ակտիվներ (2015թ.՝ ոչինչ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված ֆինանսական ակտիվները կազմում են 307,138 հազար ՀՀ դրամ (2015թ.՝ 202,642 հազար դրամ):

Ժամկետանց կամ արժեզրկված ակտիվների համար գրավային ապահովածություն չի նախատեսվում:

36.3 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույթի ռիսկը և արտարժույթի ռիսկը:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

36.3.1 Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Տատանվող դրույքների գործիքներն առաջացնում են դրամական հոսքերի տոկոսադրույթի ռիսկ, մինչդեռ հաստատուն տոկոսադրույքը Ընկերության մոտ առաջացնում է իրական արժեքի տոկոսադրույթի ռիսկ:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով՝ ներառյալ հեջավորման գործիքների ազդեցությունը: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերազնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, ներառյալ հեջերի և որպես դրամական հոսքերի հեջ բնորոշված սվոփերի ազդեցությունները, 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոփի իրացման ժամկետների: Կապտիալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

ազար ԳՅ դրամ

Արտարժույթ	Կապիտալի զգայունություն						2016
	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Ձուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ԳՅ դրամ	+1	-	-	-	(85,888)	(60,110)	(145,998)
ԳՅ դրամ	-1	-	-	-	88,745	66,938	155,683

Հազար ԳՅ դրամ

Արտարժույթ	Կապիտալի զգայունություն						2015
	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Ձուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ԳՅ դրամ	+1	-	(783)	(3)	(59,004)	(44,388)	(104,178)
ԳՅ դրամ	-1	-	790	3	60,709	48,485	109,987

36.3.2 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դեկավարությունը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային ռիսկերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատում մնալու պայմանով, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և այլ համապարփակ եկամտի վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չկարող լինելու գույքի նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ գույքի աճ:

Հազար ՀՀ դրամ	2016		2015		
	Մրտարժույթ	Փոփոխությունն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխությունն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար		+5	(13,445)	+5	387
ԱՄՆ դոլար		-5	13,445	-5	(387)

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	Ազատ	Ոչ	Ընդամենը
		փոխարկելի արժույթ	փոխարկելի արժույթ	
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	1,380,980	18,270	-	1,399,250
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	22,101	-	-	22,101
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,553,461	211,470	-	1,764,931
Վերապահովագրական ակտիվներ	307,298	-	-	307,298
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	1,545,353	-	-	1,545,353
Վաճառքի համար նատչելի ներդրումներ	3,113,009	-	-	3,113,009
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	102,000	1,250	-	103,250
Ընդամենը ակտիվներ	8,024,202	230,990	-	8,255,192
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ապահովագրական պարտավորություններ	835,838	-	-	835,838
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	279,731	483,595	-	763,326
Վարկեր ռեպո համաձայնագրերով	1,432,615	-	-	1,432,615
Այլ պարտավորություններ	171,940	16,290	-	188,230
Ընդամենը պարտավորություններ	2,720,124	499,885	-	3,220,009
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,304,078	(268,895)	-	5,035,183
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	6,320,941	94,706	-	6,415,647
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	2,471,090	86,959	-	2,558,049
Զուտ դիրք 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,849,851	7,747	-	3,857,598

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը: Չվաստակաձ ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի բաժինը ընդգրկված չէ վերաապահովագրական ակտիվների կազմում, քանի որ այն ֆինանսական ակտիվ չէ:

36.4 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ և սթրեսային իրավիճակներում Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Ընկերությունը օգտվել է ՖՀՄՄ 4 «Ապահովագրության պայմանագրեր»-ի 39 հոդվածի դ կետի i. մասից՝ ՖՀՄՄ 7-ի 39-րդ պարագրաֆի «ա» կետով պահանջվող մարման վերլուծության փոխարեն բացահայտելով տեղեկատվություն ճանաչված ապահովագրական պարտավորություններից առաջացող զուտ դրամական արտահոսքերի գնահատված ժամկետների վերաբերյալ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տես ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	Գնահատված չզեղչված զուտ դրամական հոսքեր		
		Մինչև 1 տարի	1 տարուց ավելի	Ընդամենը
2016թ. դեկտեմբերի 31				
Ապահովագրական պարտավորություններ	835,838	835,838	-	835,838
Ընդամենը	835,838	835,838	-	835,838
2015թ. դեկտեմբերի 31				
Ապահովագրական պարտավորություններ	750,956	750,956	-	750,956
Ընդամենը	750,956	750,956	-	750,956

36.5 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ ապահովագրական, պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների գեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Հաշվետվությունները ներկայացվում են Խորհրդին:

37 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի

ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է երկրորդային կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և վճարունակության պահանջվող մեծության ու ռիսկով կշռված ակտիվների մեծության հանրագումարի միջև սահմանային հարաբերակցությունը սահմանվում է 100%:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2016 և 2015թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալը, ռիսկով կշռված ակտիվները, վճարունակության պահանջվող մեծությունը և կապիտալի համարժեքության դրույքաչափի հաշվարկը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2016 (աուդիտ չարված)	2015 (աուդիտ չարված)
Հիմնական կապիտալ	3,719,905	3,422,215
Լրացուցիչ կապիտալ	42,384	(239,894)
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	3,762,289	3,182,321
Ռիսկով կշռված ակտիվներ	879,196	812,435
Վճարունակության պահանջվող մեծություն	1,668,919	1,580,451
Կապիտալի համարժեքության նորմատիվ (Ն1.2 նորմատիվ)	148%	133%

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,500,000 հազար ՀՀ դրամ գումարով: